

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1916

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ
ԿԳ
ՅՈՒԼ-ՊԵՆ.
թ. 7-12

ԱԶԳԱՅԻՆ - ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍՈՒԹԵՐԹ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՄԸ

Փարպեցւոյ « յառաջարանին » առաջարկած նոր ընթերցմանս դասաւորութեան ժամանակ, առջեւ ունէի իբրեւ բնագիր Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ս. Մալխասեանի ըրած վերջին հրատարակութիւնը (Տփղիս, 1904):

Այս յարգելի երկու բանասէրները ինչպէս որ կ'ըսեն զրբին 7երորդ էջին ծանօթութեան մէջ, ընդունած են Նորայրի կատարած դասաւորութիւնը՝ որ ի Լումայ գրական հանդէսին 1896 տարւոյն Բ զրբին 309-319 էջերուն մէջ, և անոր զրած չորս ընդհատարիւններէն (lacunes) մին միայն ընդունելով... « Մենք հետեւեցինք Նորայր Բիւզանդացոյ առաջարկած դասաւորութեան որ առ այժմ ամենից հասանալիսն է և յաշորը: Ն. Բ. այս յատաշարանում յորս տեղում պակասորդ է գրտուում: Մենք անպայման պակասորդ ենք հկատում միայն երրորդ տեղում, ինչպէս բացատրած ենք ծանօթութեան մէջ »:

Մենք. Նորայր յառաջարանին դասաւորութիւնը կատարելէն վերջ, խօսելով վեհեակի Մխիթարեանց Ղազար Փարպեցւոյ պատմութեան երեք տպագրութիւններուն վրայ, զանց չընել հեգնել մասնաւորապէս Գ տպագրութիւնը. (Լումա էջ 316)... « երրորդ տպագրութեան վարկերորդինը յոյժ մեծ է, քանզի քննարկն այլայլութեանց և խանգարմանց չափ չի կայ, սկսեալ ի յառաջարանէն »: Եւ այս բացատրութեան պակասութիւնը, անշուշտ, որովհետեւ մեծ տարբերութիւն մը կար իր և Գ տպագրութեան հրատարակած յառաջարաններու դասաւորութեանց մէջ և կամ, զոր չեմ կարծել, Նորայր ուզած ըլլայ հերքել ի. Մատթիանի Բ. տպագրութեան՝ առթիւ ըրած գովեստը « Այդ գործով (ձեռագիրները ուղղելու) զբաղուել են մեր մէջ մասնաւոր վեհեակի Մխիթարեան վարդապետները, որոնց չանքին պարտական ենք ի միջ այլոց Ղազարի վերջին տպագրի մէջ մտցրած բարեփոխութիւնները »: (Հանդէս Ամսօրեայ 1887 էջ 166): Սակայն ի սէր

1. Ղազար Փարպեցի 1878 Վեհեակի. Հրատարակողն Հ. Արեւան:

ճշմարտութեան ըսենք որ Գ. տպագրութեան զաստարութիւնը կը գերազանցէ Նախորդը, և իբրև արդիւնք՝ կրնայ համեմատուիլ մինչև իւր օրերը առաջարկուած ամէն նոր ընթերցման հետ, և եթէ էջ. Մատարթանի, Բ. տպագրութեան առթիւ, առաջարկած քանի մը զաստարութիւնները ընդունէր, անպայման նա գերազանցութիւնը պիտի ունենար բոլոր եւրեցածներուն վրայ:

Արդէն Տփղիսի հրատարակութիւնը արարութեան պարտք մը կը հատուցանէ երբ կ'ըսէ. «Երրորդ տպագրութիւնը, ըստ ցառարանի Պատմութեան Աստուածային մէջ աղանդական հատուածներէ թուական յաջող զաստարութեան.....» (էջ Դ. սին Բ. տող 12-14):

Սուքիաս վ. Պարոնեան Բանասէր Հանգէսին մէջ (1899 էջ 267) փորձած է նոր ընթերցում մը: Իւր ուսումնասիրութեան ընթացքին (էջ 268) այն եզրակացութեան կը յանգի « որ Փարպեցոյ յատարանդ, ցառայի և ըսել ամբողջ չի, տեղափոխութիւններ գտնել կրած և նաև կորուստ մը թուական ընդարձակ: Անվանա պահուած են աւեր սկզբնական և վերջնական մասերը, և այդ երկու մասանց մէջն է զատարկութիւնը. սակայն թաց ի այդ երկու մասերէն, կը գտնուին նաև քանի մը անկցորդելի մանր հատուածիկ, որ անշուշտ կորուսեալ մասին կը պատկանին, զորս կորուսեալ քորոց չեկորներուն վրայ գտնելով խզմաւոր ընդօրինակող գտնել չի ըրած իւր խոսեակնութեան կոչումին մէջ մէջ մէկ խորշ նոցա ևս չեղորին ըստ պատահման»:

Պարոնեան կը համարի յաղթութեան դրօշը իւր Նորայրի ձեռքէն երբ համեմատար կ'առաջարկէ Մխիթարեան Հարց՝ որ եթէ «արժան համարին իրենց նոր տպագրութեան մէջ զայս մեր ուղղութիւն ևս ընդունել, պիտի համարձակիմք խնդրել որ զայդ նոր տպագրութիւնն ուրաքա՛ս հրատարակուի իբր հատարակից «Նախնեաց Մատենագրութեան»:

Նոր տպագրութիւնը կատարուեցաւ ոչ ի վննետիկ այլ Տփղիս, և Պարոնեանի փափաքին՝ արժանացաւ Նորայր:

Իսկ ես իմ կարգին բանասէրներուն՝ կ'առաջարկեմ Բառապարտին նոր զաստարութիւն մը:

Իմ եզրակացութիւնը այն եղաւ որ կարելի է յառաջաբանին ցրուած բեկորները ժողովելով, տրամաբանական և պատմական կարգով մը յօրինել ամբողջ և անպակաս յառաջաբան մը:

Ընթերցողներուն՝ յաջողութեանս վկայութիւնը տալ:

Ա. — Սկիզբն առաջին գրոց պատմութեան Հայոց, որում սկիզբն աւարեալ պատմուածք ստուգիւ այրն եւրանելի Սկաթանգեղոս, ի մահուն Արտեմանայ յԱրտաշէ յորդոյ Սասանայ բռնաւոր Սոհրացոյն. և զգարած աշխարհիւ Հայոց յանգիտութենէ կռակայտութեան յաստուածագիտութեան ճշմարտութիւն ի ձեռն սրբոյ Նահատակին Գրիգորիսի. յորոյ անուն և զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի:

Երկրորդ գրոց սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրոցն՝ զիրս բազմափոփոխ աշխարհիւ Հայոց, զբարեան և զշարեաց, զվարս և զգործս զարանց սրբոց և զպգծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան: Պատմեալ զայս ամենայն փոստոս սմն Բուզանդացի, մինչև ցըթագաւորութիւնն Արշակայ (սրբոյ Պապայ, որդոյ Արշակայ), որդոյ Տիրանայ, առ որով թագաւորութեամբ բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատառեցաւ յերկուս ծուէնս, ըստ օրինակի հնացեալ ձորձոյ:

Եւ աւարտեալ աստանօր զբան պատմութեան իւրոյ՝ փացուցեալ հանգոյց. զոր անուանեալ կոչեն զանուն գրոցն Հայոց Պատմութիւն:

«Երրորդ պատմութիւնս այս ի կարգէ նորին գրոց շարագրեալ տրակարութեանս մերում. յոր հարկաւորեալ հրամանաւ իշխանաց և բանխսուրբ վարդապետաց՝ տուաք զան-

ձինս յայսպիսի գործ կարեւոր, չիշխեցեալ ընդդիմանայ, յիշելով ի Ս. Գրոց զսպառնալիսն անհնազանդից որդւոցն, և զորս գրէ՝ ներողութիւն հնազանդից և հաւանելոց. կարգել մի ըստ միովէ զիրս և զգործս, զբաղման, յեղանակ դիպմունս Հայաստան աշխարհիս, բաժանմանց յերկուս թաղաւորութիւնս:

Երկու թաղաւորութեան բաժանումն դռնելէն վերջ, շատ տրամաբանական էր որ Փարպեցին մասնականի իջնելով ըսէր թէ իշխաններէն ոմանք մնացին իրենց բնիկ տէրերուն (Արշակունեաց) ծառայութեան մէջ, ուրիշները օտար թաղաւորներու լուծը ընտրեցին. մէկ խօսքով այն ամէնը որ պիտի կազմէր իւր պատմութեան էջերը՝ հետեւեալը:

Էջ 3 տող 22

կալ ոմանց ըստ ստատուածային հրամանատարութեան ի հնազանդութիւն ընիկ իւրեանց Արշակունի թաղաւորացն և այլոց ծառայել կամու օտար թաղաւորացն՝ ի կորուստ անձանց և աշխարհիս, որք ի միաբանելն տեսանէին զԱստուծոյ օգնականութիւնն յանձինս և յաշխարհս, և ի քակտելն և ի պառակտելն՝ զմիաս և զկորուստ յանձինս և յաշխարհս²:

Այս տեղաւորութենէ վերջ շատ աւելի յարմար կը կապակցի ընդհատութիւննիս

Էջ 2 տող 7

Եւ ի վիճակէ բաժնոյ անօրինացն արանց քաջաց, ի սոհմէ նախարարացն Հայոց, տալ զանձինս անհամարս ի նահատակութիւնս ի վերայ ուխտին

սուրբ եկեղեցւոյ և կիսոց համբերել կապանաց և բանդից վասն երկնաւոր յոյսոյն բազմաժամանակ տեղու թեամբ. հեղուլ և քահանայից ընտրելոց Աստուծոյ և ճշմարտապէս հովուաց՝ դարին ի պարանոցաց իւրեանց ի վերայ ընտրեալ բանաւոր հօտին Քրիստոսի և ոմանց յընկերակցաց նախարարացն. և յայլ ազատ մարդկանէ՝ դառնալ յետս յուխտէ սրբութեանն, և անշէջ յաւիտենից հրոյն լինել լուցկիք, պատրաստելոյն սատանայի և նորին արբանեկացն: Եւ գրել զայս ամենայն մինչև ցօր սկզբան Մարգարեութեան Հայոց Վահանայ Մամիկոնէից տեսուն և մեծի զօրավարին Հայոց և Մարգարանի. և դադարեալ հանգուցից յայնմ տեղւով զբան վաստակոց պատմութեանց այսոցիկ:

Բ. — Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան գտի ի նոցանէ զժամանակաց և զգարուց աշխարհիս Հայոց բազմադիմ յեղափոխութիւնս, յստոյգ և յանսխալ կարգաւորութենէ Առաջին գրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ագաթանգեղոս, այր բանիքուն գիտութեամբ և լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից և յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ:

Սա զնուագումն թաղաւորութեան Արշակունւոյն Արտաւանայ և զգօրանայն Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ ստուգապէս յօրինուածով կարգեալ գրոյմեաց, զքինախնդրութիւնն խոսքովու և զտարակուսանս

1. Փարպեցւոյ Գ. տպագրութիւնը Վենետիկ 1891. Նորայր և Պարոնեան անփոփոխ կը պահեն այս գուրբը. Մատթեան միայն ինծի հետ կը համաձայնի այս հաստատութիւնը թաղաւորութեան մէջ:

2. Նորայր պակաս մը կը գնէ այս տեղերէն վերջ. և կը շարունակէ Որում երկրորդ գրոցն անուանեն զովս պատմագիր են:

գոռագացեալ Ստահրապոյն . զխորհուրդն և զխոստմունսն գտողի հնարս յաղագս մահուն խորովու, զխորամանկութեանն զմտածութիւնն Անաղայ, և զսպանումնն ի նմանէ զնորուն խորովում նենդաւոր խաբէութեամբ . զմասնումն յայնմհետէ զաշխարհիս Հայոց ի ձեռս թագաւորութեան օտարի . զփախուցանել դայեկացն զորդիս խորովու յօտարութիւն առ ի յապրումն . զհսկայաբար միւսանգամ զգարձն Տրդատայ և զյազիլոզ մարտիւ ունենն զԻւրային զնախնեացն քաջաբար զթագաւորութիւնն . զգիմելն առ նա սրբոյն Գրիգորի՝ զհեշտ պաշտաման տենչիւ, ինահաստակութիւն նորին սրբոյն, և թէ որպէս տարաւ անպատումն և անբաւ բազում չարարանացն . զառաւելապէս օգնակաւ նութիւնն Քրիստոսի, որ ցուցաւ ի վերայ սրբոյն ի հիացումն դեռուս մուրեալ մարդկան . զհամբերութիւն տեղովութեանն այնչափ ամս ի վիրապին, որ պահէր զնահատակն ի գործն Հայոց . զեկս սուրբ կուսանացն ի Հռովմայեցւոց քաղաքէն, և զհեղումն մարտիրոսական տրեանն ի վաղարչապատ քաղաքի, յոռողումն դաւաթութեան գոսացելոց դիւց մարդկան . զենն սրբոյն Գրիգորի ի խոր վիրապէն, և զհանումն Հայաստան աշխարհիս ի խաւարէ անգիտութեանն յատուածային արքայութեանն լոյս . ըզյորդորումն յայնմհետէ վարդապետու-

թեան կենաց աշխարհիս Հայոց . զկրտակս մկրտութեան լուսոյ, զոր Փրկին Քրիստոս ի ձեռն մեծի նահատակին Գրիգորի, բարեխօսութեամբ ևս սուրբ կուսանացն, ծաւալեցոյց յաշխարհիս հերում . զլինութիւն եկեղեցեաց , զպայծառութիւն քահանայից , ըզխումբս բազմամբոխ ժողովոցոց ի տօնս Փրկին և ի ժողովմունս յիշատակաց սրբոց, Զայս ամենայն ևս առաւել քան զսոյն գիտութիւն, յիւրում հաստատուն և անխալ կարգաւորութիւնսն պատմեաց մեզ երանելի այրն Աստուծոյ սուրբն Ագաթանգեղոս՝

Որոշ կը տեսնուի որ Ա. գլուխը ինքեան համառօտութիւն մ'է յաջորդ չորս գլուխներուն . Երկրորդ գլխով կը սկսի ընդարձակել իւր գաղափարն, մատենախօսութիւն մ'ընելով նախ իրմէ առաջ եղած ազգային երկու պատմագիրներուն վրայ , որոնց շարունակութիւնը պիտի գրէր ինքը . տալով անոնց պատմութեան նիւթին համառօտութիւն մը . Այսպէս Բ. գլուխը Ագաթանգեղոսի նուիրուած է ինչպէս որ տեսանք . Գ. գլուխը բնականաբար թիւզանդի սահմանած պիտի ըլլար հետեւեալ շատ հաւանական է որ սկսէր

էջ 3 տող 28^a

Գ. — Իսկ զհետ սորա որում երկրորդ գրոցն անուանեն զոմն պատմագիր, կոչեցեալ Փոստոս Բուզանդացի . և վասն զի կարգելոցն առ ի

1. Երկրորդ գլուխը ոչ մէկ բանասէրէ փոփոխութեան ենթարկուած է . ամբողջութիւն մ'է որ անյայտ հասած է մեզի :

2. Գ. տպագրութիւնը 1891 Վենետիկ կը սկսի նոյնպէս Գ. գլուխը Որում երկրորդ գրոցն և կը համաձայնի ինծի հետ մինչև հայեցողաց : Իսկ Բ. տպագրութիւնը փոխանակ երրորդ գլխոյ, Գ. գլուխ կը գնէ , ամբողջ այդ կտորը , և կը փակէ գլուխը շարունակելով ըսնալի են ոմանք ի ֆրանս . . . յԱսորիս ասկից վերջ կը կցէ եւ քաջքն . . . միջնեւ լաւանալ :

Տարբերութիւնը որ կայ Անետիկ Բ. տպագրութեան 1873 . և Գ. տպագրութեան մէջ՝ ետեւ առաջութիւնն է Գ. և Գ. գլուխներու . ինչպէս և Ե. Մտաթեան կ'առաջարկէ Հաւեդիս Ամսթրալայի մէջ 1887 էջ 167 . բայց ի քանի մը փոքր հատուածներու յաւելումներէ զոր ունի 1891 տպագրութիւնը : Պարոնեան Ս. Վ. Բանասէրի մէջ Հատոր Ա. 1899 էջ 269 իւր ընթերցումը նոյն կը պահէ Ա. գլխոյն մէջ Վենետիկ Գ. տպագրութեան հետ (1891), Բ. գլուխը ևս կը շարունակէ նոյնպէս , միայն աւելցնելով հա-

նմանէ ի տեղիս ուրեք կարծեցին ու մանք բանք ինչ ոչ յարմարք և դիպողք, որպէս առաջնոյն ճշմարտութիւն, Ագաթանգեղոսն կոչեցելոյ՝ յերկուացեալ հարկաւորեն չստիլ զայն պիտի անպատշաճ կարգումն Բիւզանդացոյ ուսելոյ:

Քանզի Բիւզանդիոսս այս փոքրիկ քաղաքիկ էր, յառաջագոյն շինեալ յառնէ ումեմնէ Բիւզաս անուն կոչեցելոյ, մերձակայ թրակացուց սահմանակցութեան, զոր և ի գալն աստուածակամ հրամանով սրբոյն Կոստանդիանոսի ի վերայ անթիւ բազմութեան Գթաց ի պատերազմ, և առեղերքն Ղեկովբ գետոյ արարեալ զիւր դօրու բանակատեղս, որ և աստուածային տեսչութեան լինէր արժանի, օրինակեալ նմա յայտնապէս յերկնից աստեղեայ լուսատեսիկ նշան կենսատու խաչին բերելով շուրջ զինքեամբ ճառագայթից նշանագիրս, թէ «այսու յաղթեցես» և նորա զարթուցեալ յուսով երևեցելոյ նմա սուրբ նշանին օգնականութեան, յաղթեալ վանէր զթշնամեացն բանակսն, և խնդիր փութապէս գիւտիս այսմ՝ հագացեալ՝ ճեպով զիւր մայրն գերանելին հեղինէ յերուսաղէմ առաքէր:

Եւ թէ որպէս անդ ի ձեռն ջերմ խնդրոյ սրբոյ մարդոյն յայտնեցաւ կենաց փայտն՝ գիտէ ամենայն անձն, ի նորին գրոց տեղեկացեալ զգիւտ փրկութեան մերոյ:

Եւ ինքն թագաւորն եկեալ ի յառաջագրեալ քաղաքիկն, որ անուանեալ կուէր Բիւզանդիոս, և տեսեալ զսքանչելատեսիլ զամրութիւն տեղւոյն, թէպէտեւ ծանրագոյն և բազում աշխատութիւն ի տեղւոյն ցուցանիր՝ ոչ ինչ վեհերէք վասն օգտակարու-

թեան կղզւոյն. վասն զի շրջափակեալ յամենայն կողմանց ծովածիր էր տեղին, բայց խուն ինչ ցամաքայտակ ճանապարհ, առանց շրջագայութեան ջրոյն, որ եղանէր յարեմուտս կոյս քաղաքին:

Վաղվաղակի զձեռն ի գործ արկեալ՝ տայր հրաման հարկից զբարձրաբերձ զբլուրն, որք ի ներքս ի կղզւոյն էին, և շինեալ քաղաք մեծապայծառ, զոր ըստ իւրում անուանակոչութեան կոստանդնուպօլիս անուանէր, որ թարգմանի հայերէն կոստանդիանոսի քաղաք. զոր ոմանք ըստ հռովմայեցի բարբառոյն, պալատն ասեն, որ թարգմանի արբունի: Իսկ որ յառաջագոյն շինեալ Բիւզանդիոսն էր, էր թաղ մի յեղեր նորին քաղաքի որ մինչև ցայսօր նորին անուամբ կոչի Բիւզանդիա: Եւ յայնմհետէ վտակք գիտութեան, որպէս ի թագաւորանիստ վայրի յորդեալ բղխեն ի քաղաքն որպէս և յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց քաջ ուսեալքն անդ փութան հանդիսանալ: Եւ մինչև ցայսօր առաւելեալ տարածեն յամենայն կողմանս նորա իմաստութեան վտակք: Արդ յայնպիսումն քաղաքի և ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն փաւստոս այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէր ի պատմութեան իւրում: Քնաւ մի լիցի: Ուստի և անհաւատայի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն, ասեմ՝ թէ գուցէ այլ ոք յանդուգն և անհրահանգ բանիւ լլբբար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչ պէտս ըստ կամի և կամ զի ուրուք անկարեալ գիպողս՝ ալլաբանեալ վրասեաց, և անուամբ փաւստոսի զվրոյ յանդգնութեանն սխալանս համարե-

ցաւ ծածկել, և այն յայտնի ցուցանի
ամենայն հայեցողաց¹։

Փարպեցիին հոս նշանակած կը թուի
պարագայ մը յորում այդ «շիրք(երը) և
անկրանակ քանիսնեքը կը ցած են յաջո-
ղիլ իրենց « յանդգնութեանն սխալանս »
Փաւստոսի անուամբ ծածկել, Հայաստանի
խռովեալ վիճակն էր անշուշտ

Էջ 3 տող 19

(քանզի) ըստ² այլալման իրաց և
ժամանակաց և դիպելոյ աշխարհիս
Հայոց բազմամբոս գարուց, երբեմն
խաղաղութեան և երբեմն սաստիկ
ամբաւ չլիովմանց, միարանութեան
առ միմեանս և երկպառակութեամբ
ճեխքելոյ ի միմեանց։

Պակեցաւ այն հսկողութիւնը՝ որ մինչև
վարդանանց պատերազմը ամէն իշխան կը
կատարէր իւր սահմանները, ինչպէս որ
ազգային պատմութիւնը կ'աւանդէ, չի
թողլով ոչ մէկ աղանդաւորի ոտը կոխել
Լուսաւորչայ փարախին մէջ. այդ հսկո-
ղութեան պակասութեամբ՝

Էջ 5 տող 1

բազումը սպրդեցին գալ յայսպիսի
յայրատութիւնս³։

Փարպեցւոյ ծանօթ անձինքներ էին այն
գրաննգները, թէպէտև օտարազգի, բայց
համբաւին ելած կը թուի, այս պատճա-
ռաւ և լոկ ակնարկութեամբ մը կը բա-
ւականանայ պատմագիրը. քանի որ ամէն
«հայեցողաց» ալ յայտնի էր, իւր որոշ ա-
նոնց ազգութիւնը կը նշանակէ

Էջ 4 տող 36

քանզի են ոմանք ի Յոյնս այլ մա-
նաւանդ առաւել յԱսորիս։

Անոնց գիտութեան չափը և գրութեանց
տեսակն ևս կը ճանչնայ

Էջ 5 տող 2

արք տգէտք և յանդգունք գրեցին
յիրքեանց ճառս ընդունայնս և անպի-
տանաբանս և խառնեալ եղին ի գիրս
գիտուն լսողաց. այլ ընտրող մտաց
ճանաչի գիտնոցն բանք և անմտացն
չաղփաղփութիւնք։

Այս գրաննգներու նպատակը զուտ
կրօնական էր. Յոյնը և Ասորին, ներ-
կայացուցիչներ էին ժամանակին երկու
մեծ դպրոցներուն Աղեքսանդրիայի և Ան-
տիոքի, որոնք կը մրցէին իրարու հակա-
ռակ ընդլայնելու իրենց իրաւասական շըր-
ջանակը, երբեմն աղանդաւորներու պաշտ-
պան ալ հանդիսանալով։ Փարպեցւոյն
յաջորդ պարբերութեան մէջ ըրած ակ-
նարկութիւններէն կը հասկցուի թէ զրա-
ննգներու նպատակն էր խախտել Ս. Եր-
րորդութեան վարդապետութիւնը. դի և Ե
դարեբու աստուածաբանական և քրիստո-
սաբանական մեծ խնդիրը, Պատմիչը՝ իւր
ուղղափառ դաւանութեամբ պատմագրելու
ուրախութիւնը՝ հակադրութեան կը զնէ
այն անպիտան շաղփաղփողներուն հետ,
որ ամէն նեղութիւն և վիշտ յանձն կ'առ-
նուն միայն թէ «հասեալ խնդրոյն տն-
չիցն... բերկրեալ զուարճանան»։ որչափ
ևս առաւել ինքը իրաւունք ունէր ցնծա-
լու։

1. Մինչև հոս վենետիկ Գ. տպագրու-
թիւնը 1891 կը համաձայնի ինծի հետ. և
կը փակէ գլուխը քանզի են ոմանք ի յոյնս
այլ մանաւանդ առաւել յԱսորիս։

2. Գ. տպագրութիւնը հոս կը սկսի Գ.
գլուխը աւելցնելով իսկ զնետ սորա՝ ըստ

այլալմանս...

3. Գ. տպագրութիւն ասկից վերջ կը շա-
րունակէ արք տգէտք և կը համաձայնի
մինչև շաղփաղփութիւնը յորմէ վերջ կը
շարունակէ Որում արժանաւոր խորհրդա-
կանութեամբ։

Էջ 6 տող 11

Եւ արդ՝ յահագին այսպիսի մահուս
գերծեալ անձինք շահաժողով ընչասի-
րացն և հասեալք եւթ խնդրոյն տեն-
չիցն, որում ուշ արարեալ բաղձան. մո-
ռացեալ զվիշտան՝ բերկրեալ օգտուքն
զուարճանան. իսկ որչափ ևս առաւել
գտանիցին գանձուն յաւիտենից ժա-
ռանգաւորք որք և զյօրինուածս բա-
նից ստուգապատում՝ կարգեալ պատ-
մադրեցին, չառնել մարդահաճութեան
բանից յաւելուածս, ի ցրումն ոսկե-
բաց, ըստ առացածի ստղմոտեցին,
այլ զգուշական երկրիդին ընդ բազ-
մաց լայնածաւալս գիտնական բանի
նաւեցին անվրժար, ի սուրբ Հոգւոյն
չնորհն յուսով ապաւինեալք. ունելով
փոխանակ փայտամած տախտակացն՝
զհիմն ուղղափառ հաւատոյ և փոխա-
նակ ի նմա բազմայարմար կազմու-
թեանն հնարիցն՝ գերբեալ ինքնու-
թեանն. Եւ զի նաւացն տախտակք
առանց բազմաց սատարելոյ չհնարին
լինել յանօթ պիտանացու, քանի՜ ևս
առաւել այսպիսի մեծ և հոգեւոր գոր-
ծոյ ձեռնարկութիւն, ուր բազում
կարեւոր պէտք էին առաքելնի արանց
օգնականութեան:

Այդ առաքինի մարդն էր Վահան Մա-
միկոնեան իշխանը որուն հովանաւորու-
թեան տակ՝ փարպեցին սիրտ ըրաւ շա-
րադրելու իւր պատմութիւնը.

Էջ 5 տող 6

Գ. — Որում՝ արթնամիտ խոր-
հրդականութեամբ ուշադրեալ այսմ

ամենայնի մտաւոր և քաջ այրն Վա-
հան տէրն Մամիկոնէից, զօրավարն
Հայոց և մարզպանն, որ բազում և
անհամար ուղղութեանց աշխարհիս
Հայոց ի ժամանակս իշխանութեան
իւրոյ զեկ արարող, անձամբ և զայս
յորդորելով զբազումս: Սա որպէս
և այլ ամենայն բարւոյ իրօք հոգա-
ցեալ զՀայաստան աշխարհի իրա ա-
ռաւել և զայս ի դէպ և պատշաճ հա-
մարեցաւ ի մնացեալ տեղւոյ պատ-
մութեան Երկրորդ գրոցն ամեցու-
ցանել յառաջ և գրել յայնմհետէ զե-
ղեալս յաշխարհիս Հայոց, Բազում
զգուշութեամբ գրել և կարգել մի ըստ
միովէ զամենայն զհոգեւորացն զառա-
քինութիւնս և զարանց քաջաց զու-
լութիւնս: Որպէս զի զհոգեւորացն
զբարի վարսն լուեալ բազմութեան
ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկա-
ցին մարդիկ ճգնութեանց նոցա,

Այդ առաջադրած սրբակեաց մարդիկ-
ներու առաքինութիւնները նկարագրած ա-
տեն նպատակն էր որ ժողովուրդը անոնց
ճգնութեանց հետեւելու փոյթ տանէր, այս
բանս, միջոց մէջ իրենց մէջէն չարութեան
եռանդը մարելու:

Էջ 6 տող 7

և պարտեալ եռանդեանն չարու-
թիւնն անդէն և անդ դադարեալ ցած-
նուն:

Հոգեւոր մարդէն վերջ պիտի նկարա-
գրէ « գարանց քաջաց զառաքինս », քա-

1. Պարոնեան կը սկսի Գ. գլուխը Գ.՝
տպագրի համաձայն մինչև տող 20 էջ 12
իսկ զնետ սորա և կը շարունակէ էջ 15
տող 21 կալ ոմանց մինչև յանձինս եւ յաշ-
խարհս և կը գառնայ էջ 18 տող 5 Որում
արթնամիտ մինչև էջ 14 տող 6 ճգնութեանց
նոցա, յորմէ վերջ կը դնէ էջ 16 տող 10
եւ քաջք լսելով... մինչև լաւանալ:

2. Ե. Մատթեոսն այստեղ կը համա-
ձայնի ինձի հետ մինչև ողորմի փութով
digitised by

3. Գ. տպագրութիւնը մինչև հոս կը հա-
մաձայնի ինձ, որմէ վերջ կը յաւելու. Այս-
պէս եւ բան իզորին Աստուծոյ... մինչև
ողորմի փութով: Եւ կը շարունակէ Եւ արդ-
յանապիս այսպիսի մանուս մինչև առաքինի
արանց օգնականութեան յորմէ վերջ կը
դնէ կալ ոմանց ըստ Աստուածային հրա-
մանատութեան մինչև յանձինս եւ յաշ-
խարհս: Կը գոցէ գլուխը աւելցնելով Եւ
քաջք լսելով մինչև լաւանալ:

A.R.A.R.®

ջախերելու համար քաջերը և օրինակ տալու ծոյերուն

էջ 5 տող 17

և քաջին լսելով զայլոց զգործան յառաջագոյն քաջացերոցն՝ յաւելելով յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց՝ անձանց և ազգի։ Իսկ ծոյլքն և վառքն հայելով յանձինս և լսելով զայլոց ըզպարսաւանս ի բարի նախանձն կըրթեալք ջանասցին լաւանալ։

կը հանէ և բարոյական մը։

էջ 6 տող 8

Այսպէս և բան հզօրին Աստուծոյ վճարէ զամենայն գոր կամի։ ցասուցեալ ըստ չարի մեր գործոց՝ խրատէ ողորեալ։ զբարի դարձ(եալ) տեսանելով՝ ողորմի կիութով։

Ասկից ետք վերջաբանը կը սկսի նոր գլխով մը, ուր փարպեցին մեզի կու տայ իւր ինքնակենսագրութեան դրուագ մը։ այսինքն՝ որուն քով աշակերտած ըլլան, որ բարոյական մեծ նշանակութիւն մը կը թուի ունենալ։ երկրորդ՝ վաճան Մամի կոնեանէն պատմագրելու ստիպողական հրաման ստանալը։ երրորդ աւանդական կարգ մը խոնարհաբանութիւններ, իւր գիտութիւնը անբաւական համարելով, նիւթին դժուարութիւնը ցուցադրելով, վերջապէս՝ զիջումը, Աստուծոյ օգնականութեան վրայ յոյսը դնելով։ Այսպէս

էջ 5 տող 22

Ե. — ¹ Ըստ այսմ օրինակի զգու-

չայեալ ստիպեցուցանէ զմեզ տէրն Մամիկնեից վաճան, զօրավարն Հայոց և մարզպան։ որոյ հասեալ հրաման առ իս Ղալար փարպեցի, որ և սնեալ և ուսեալ առ ոտս առաքինակրօն երաններոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հոյակապ և յականաւոր տոմէն Արծրունեաց, որդի վասակայ, եղբօր Ճաճատայ և Գոտորգի։ Որ մինչդեռ էր ի ախ մանկութեանն, և այն ինչ դեռ տեղ մուրուացն ի վերայ գեղեցկատեսիլ վարդափթիթ ծնօտիցն բուսանէր՝ ի բաց ընկեցեալ արհամարհէր զամենայն վայելս անցաւոր կենցաղոյս, և զերկնաթուղի զճանապարհէն յաւիտենից բարութեանցն ընտրեալ հետեւիւր, կեցեալ յանապատս ընդ արւ ընտիրս ի ճշնութիւնս մեծամեծս։ Զորոյ և ոչ բաւական ոք է բանիւ բովանդակել զանբաւ վարուցն զառն նահատակութիւնն։ այլ այլքան միայն ասացեալ ֆեստուցուք զբանս, որպէս թէ պատճառանօք գորով ի մարմնի՝ տքնութեամբ և պահօք և անդադար աղօթիւք զանմարմնոցն զվերին զօրացի բերէր յանձին զբարաքավարութիւն, որ ոչ երբէք ի կեանս իւրում ընտրեաց ժամ աղօթից, այլ զտիւ և զգիշեր անհանգիստ նմա ժամ աղօթից էր։

Եւ կեցեալ այսպէս, մինչև առաւելեալ ծաղկէր հեր գլխոյն սպիտակն քան զխարտէն, և կատարեալ զընթացն նահատակութեան իւրոյ՝ հանգչէր։ Եւ եղեալ ի մատրանն ի յԱբամակերտի։ որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ

1. Բ. և Գ. տպագրութեանը և Ե. Մատթեոս ինծի նման կը կարգան՝ Ե. գլուխը։ Իսկ Պարոնեան Ե. գլուխը կը կազմէ այսպէս. Գ. տպագրի էջ 19 տող 2. Զի ոչ փոքր ինչ մինչև տող 17 ի յայտնութիւն. և կը շարունակէ էջ 16 Ե. գլուխը հիշտ այնպէս մինչև 19 երես տող 2 զի ոչ էր քան զբան որմէ վերջ գատարկութիւն մը զնէ՝ պակասին մնացորդները ենթադրելով հե-

տեւեալ հաստատմները էջ 14 տող 22 եւ զյօդիստուածս բանից... մինչև էջ 15 տող 3 սաղմոսերգութիւն շարունակելով էջ 14 տող 6 եւ պարտեալ մինչև տող 22 ողորմի փուլութով շարունակելով էջ 15 տող 4 զգուշապան երկիւղիլ տող 21 օգնակամութեան և կը փակէ գլուխը էջ 19 տող 18։ Եւ վստմ զի են սստ պէտք են։

քարոզի մինչև ցայսօր և յաւիտեան, անուն սրբոյն յամենայն եկեղեցիս Հայաստանի աշխարհիս, վրաց և Աղտանից: Եւ արդ՝ այսպէս հարկաւորեալ բռնադատեաց զտկարութիւնս մեր տէրն Մամիկոնէից վահան, սպարապետն Հայոց և մարզպան, ձեռնարկել ի դործ՝ որ ի վեր քան զկարգիտութեան մերոյ էր. քանզի ոչ էր քան զբան,

Հոս բնագիրս՝ պակաս մը կ'ենթադրէ այդ անիմաստ վերջին շարք մը բռնութիւն համար. մինչդեռ՝ ըստ իս՝ աղաւաղութիւն մը համարելու ենք յաջորդ զբաժ տողերու որ եթէ զեղծուին բնագրէն՝ առանց իմաստին պակասութիւն մը տալու ուղիակի կը շարունակեն հեղինակին ըսելիքը

էջ 6 տող 25

Ձի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղ այսպէս ումք տալ զանձն յայսպիսի վատասկս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոյեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջ իմաստասէր լողաց. չյաւելուլ զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից. չնուազեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել, բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն: Եւ վասն զի են աստ պէտք բազում երկիւղագիրն պատրաստութեանն՝ արդնպաստեալ իմում տկար խորհրդոյս, աղաչեմ՝ սատարեցէք ամենայն աղօ-

թառէր անձինք, ձերովք առ Աստուած խնդրուածովք օգնականութեամբք. որովք արդարապատումն ճշգրտաբանեալ՝ զեղեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն, ընդ յորձանս մեծապատումն ծաւալացս՝ նաւեալ մը տաւոր ստուգաբանութեամբ, հասից բարեխօսութեամբ սրբոյ յանալէկոծ և յապահով նաւահանդիսան:

Օրհնեալ է Աստուած

Այսպէս իմ նոր ընթերցման դասաւորութեան համեմատ Ղազար Փարպեցւոյ պատմութեան յառաջաբանը կը բաժնուի աւանդական հինգ գլուխներու:

Առաջին գլուխը յինքեան համառոտութիւն մ'է՝ ամբողջ յառաջաբանին՝ որուն ընդարձակութիւնը կը սկսի Երկրորդ գլուխով՝ որ նուիրուած է ազգային առաջին պատմիչ Ագաթանգեղոսին որուն պատմութեան համառոտ բովանդակութիւնը կուտայ մեզի. Երրորդ գլուխը Բուզանդի ջաւազովութիւնն է և զբանեմք Յոյն և Ասորիներու պարսաւանք մը: Չորրորդ գլուխը մէջ կը պարգէ իւր զրելիք պատմութեան ծրագրը, վահան Մամիկոնեանի փափաքին համեմատ: Հինգերորդ գլուխը վերջաբանն է, ուր կը ստանանք հեղինակին և անոր վարդապետին կենսագրութեան քանի մը նօթեր, ասոնցմէ վերջ կը սկսի բացատրել ձեռնարկելիք գործին անհամար դժուարութիւնները, ցուցնելով իւր գիտութեան պակասութիւնը: Վերջապէս յանձն կ'առնու միայն՝ որովհետեւ, Հայոց իշխանին ստիպումը կը բռնադատէ զինքը, և գործի կը սկսի Աստուծոյ շնորհաց ապաւինելով:

Հ. Լ. ԱԹՃԵԱՆ

1. Տիգրիս 1904 էջ 6 ի ծանօթութեան կը համարին որ ենթադրած պակասած մատուցմ, Ղ. Փարպեցիին, ձեռնեղով Արարականդոսի յառաջաբանին՝ նմանեցնում է մատենագրի փխակր ծովային վաճառականի վտանգայից փխակր մինչդեռ իմ ներկայ դասաւորու-

թեան համաձայն Փարպեցին հեռի է այդ տեսակ փոխառեալ նկարագիրներ ընելու:

2. Դորալը հոս պակաս մը կ'ենթադրէ:

3. Տես Բանասիր, Հատոր Ա. էջ 272 կրկին յառաջաբանք Փարպեցւոյն. Սուքիաս Վ. Պարոնեան: